




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10064

Wine

10a

38

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ա Ն Ո Ւ Ձ

891.99

Թ-95

2003


91.99

8-95

ՅՈՂԶ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ա Ն Ո Ւ Շ

28290-ч. 3



11375-57

Г. Мясников

ԱՆՈՒԾ

ՆԱԽԵՐԳԱՆՔ



(Համբարձման գիշերը)

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թեին՝ թըռչելով՝
Փէրինները սարի գլխին
Հաւաքեցին գիշերով:

— «Եկէք, քոյրեր, սէգ սարերի
Չընաղագեղ ոգիներ,
Եկէք, ջահել սիրահարի
Աէրը ողբանք վաղամեռ:

Օխան աղբիւրից ջուր է առել
Կոյս սափորով, լուռ ու մունջ,
Օխաը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ ծաղկեփունջ:



3

Ջուրն ու ծաղիկ աստղունք դըրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափագ սըրտով խընդիրք արել՝
Բարի ժըպտան իր սէրին...

Ափսոս, Անոնշ, սարի ծաղիկ,
Ափսոս իգիթ քու եարին.
Ափսոս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսոս էդ ծով աչքերին...»

Ու նրանց հետ՝ ցօղ-արցունքով
Լըցւած սըրտերն ու աչքեր՝
Սարի ծաղկունք տըխուր սիւքով
Հառաչեցին էն գիշեր:

«Վուշ-վոնշ, Անոնշ, վուշ-վոնշ, քուրեկ,
Վոնշ քու սէրին, քու եարին...
Վուշ-վոնշ, Սարժ, վուշ-վոնշ, իգիթ.
Վոնշ քու սիրած սարերին...»

— Եկէք, քոյրեր, սէդ սարերի
Ձըքնաղագեղ ոգիներ...»
Ու փերիներն էսպէս տըխուր
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հըրաշալի
Հընչիւններով դիւթական,
Ու հէնց շողաց ցոլքն արևի՝
Անտես, անհետ չըքացան:

Խոր սուգեցին ակն աղբիւրի,
Մըտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային վըտակների
Ալիքները պաղպաջուն:



ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

I

Կանչում է կըրկին, կանչում անդադար
էն չըքնաղ երկրի կարօտը անքուն,
Ու՛ թեքն անա փըռած տիրաբար՝
Թըռչում է հոգիս, թըռչում գէպի տուն:
Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղճւց կարօտով ըսպասում են ինձ,
Ու ձըմբան երկար գիշերը նըստած
Խօսում են լօռու հին-հին քաջերից:

Դէպ էն սարերը, որ վէս, վիթխարի,
Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,
Հըսկա՛յ շուրջպարի բըռնած երկընքում,
Հըրճւում են, ասես էն մեծ հարսանքում
Պերճ Արագածի նազելի զըստեր,
Որ Դե-Ալ, Դե-Բէթ և այլ հըսկաներ,
Խօլ-խօլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փախցըրին բերին անառիկ լօռի:

II

Է՛յ հին ծանօթներ, է՛յ կանանչ սարեր,
Ահա ձեզ տեսայ ու միտըս ընկան,
Առաջըս եկան երջանիկ օրեր,
Սիրելի գէմքեր, որ հիմի չըկան:
Անցել են, ոնց որ ծաղկունքը պէս-պէս,
Որ անցած դարնան կային ձեր լանջում.
Անցել ձեր գըլխի հէրւան ձիւնի պէս,
Բայց եկել եմ ես՝ նըրանց եմ կանչում:
Ողջո՛յն ձեզ, կեանքիս անդրանիկ յուշեր,
Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
Թըռչուն կարօտով փընտրում ձոր ու լեռ,
Դիւթական ձայնով կանչում է հանդէս:
Դո՛ւրս եկէք կըրկին շիրմից, խաւարից,
Դո՛ւրս եկէք տեսնեմ, շօշափեմ, լըսեմ,
Կեանքով շընչեցէք, ապրեցէք նորից,
Լըցրէք պօէտի հաճոյքը վըսեմ...

III

Եւ մութ այրերից մամռոտ ժայռերի,
Թաւուտ ծըմակի լըռին խորքերից
Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանքն անա լըսում եմ նորից:

Թընդում է զըւարթ աղմուկը բինի,
 Բարձրանում է ծուխն իմ ծանօթ ուրթից,
 Ու բոլորն, ահա, նորից կենդանի
 Ենում են աշխոյժ վաղորդեան մութից,
 Ու թաւմ, ցօղապատ լեռների լանջում...
 Սոս... ալանջ արա,—հովիւն է կանչում...

IV

—Աղջի, անաստեած, նըստիւ վըրանում,
 Ինչ ես դուրս գալիս, խելքամաղ անում,
 Աշուղ ես շինել, չեմ հանգըստանում,
 Խաղեր կապելով,
 Զօլեր չափելով,
 Ոչխարըս անտէր,
 Ընկել եմ հանդեր:

Աման, էրեցիւր սիրտըս քու սիրով,
 Ոտըս կապեցիւր թել-թել մագերով,
 Էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ զօռով,
 Այ սարի աղջիկ,
 Այ սիրուն աղջիկ,
 Այ դու կարմըաթուշ,
 Թուխամաղ Անուշ:

Քու հէրն ու մէրը թէ որ ինձ չըտան,
 Արին կըթափեմ ես գետինըման.
 Սարերը կընկնեմ կորչեմ անգիւման,
 Այ սե աչքերով,
 Այ ծով աչքերով,
 Ունքերըդ կամար
 Աղջիկ քեզ համար:

V

Երգում է Սարօն, ու չի կարենում
 Աղջիկը հանգիստ նըստի վըրանում:
 —Էն ռվ էր, նանի, որ կանչում էր միդ,
 Դու չէս իմանում... ալանջ դիւր, տես...
 —Հերիք է, Անուշ, ներս արի դագէն,
 Քանի դուրս թըռչես, նայես դէս ու դէն,
 Տեսնողն էլ կասի — ինչ աղջիկ է սա...
 Հազար մարդի մօտ կերթայ կըխօսայ:
 —Մըտիկ տուր, նանի, էն սարի լանջին,
 Ինչքան աւուկ է տալիս կանանչին...
 Նանի, թող գընամ քաղեմ ու հիւսեմ,
 Էն սարի լանջին «ջան գիւլում» ասեմ:
 —Հանգիստ կաց, Անուշ, դու հասած աղջիկ:

Ի՞նչ ունիս ջահել չորանների մօտ,
Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ,
Պարկեշտ կաց, աղջի, ամօթ, է ամօթ:
—Ա՛խ, սիրտըս, նանի, չը գիտեմ ընչի,
Մին լաց է լինում սեակնած, տըխո՛ւր,
Մին թե է առնում, ուզում է թըռչի,
Ձըգիտեմ՝ թե ո՛ւր, չըգիտեմ՝ թե ո՛ւր...
Նանի ջան, նանի, ես ի՞նչպէս անեմ,
Ի՞նչ անի անքուն, անհանգիստ բալէդ
Նանի ջան, նանի, կուժը թող առնեմ
Աղբիւրը գընամ աղջիկների հետ...»

VI

Կըժերն ուսած՝ թըրւըռալով
Ջուրն են իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
Երգը գընգում սարն ի վեր:

—Ամպի տակից ջուր է գալի
Դօշ է տալի, փըրփըրում.
Էն ո՛ւմ եարն է նըստած լալի
Հօնգուր-հօնգուր էն սարում:

Ա՛յ պաղ ջըրեր, գուլալ ջըրեր,
Ո՛ր գալիս էք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չօլեր,
Եարս էլ խըմեց էդ ջըրից:

Եարաբ խըմեց, եարաբ հովցաւ
Վառւած սիրտը էն եարի,
Եարաբ հովցաւ, եարաբ անցաւ
Անքուն ցաւը ջիգեարի...»

—Աղջի, քու եարն եկաւ անցաւ
Վառւած, տարւած քու սիրով,
Էրւած ջիգեարն՝ եկաւ անցաւ,
Ձըհովցաւ պաղ ջըրով...»

Ամպի տակից ջուր է գալի,
Դօշ է տալի, փըրփըրում.
Ա՛խ, իմ ազիզ եարն է լալի
Հօնգուր-հօնգուր էն սարում:

VII

Ու պառաւ նանի սըրտի մէջ յանկարծ
Ձէն տըլաւ թաքուն մի խաւար կասկած.

— Էն երբ էր՝ Անուշն իր կուժը առաւ,
 Աղբիւրը գընաց ու ետ չըդառաւ...
 Ամպերն եկել են սարերը պատել,
 Ձորերը լըցւել, իրար փաթաթւել,
 Հազար չար ու շառ, հազար հարամի,
 Հազար ջահելներ վըխտում են հիմի...»
 Ու ելաւ տեղից պառաւը յանկարծ.
 — Ո՞ւր կորար, Անուշ, այ մազըդ կտրած...»
 Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,
 Կանչում է, կանչում անահ զաւակին:
 — Աղջի, սևասիւրտ, քու ահը կըտրի,
 Աղջիկը մենակ ձորը կըմըտնի:
 Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,
 Ի՞նչ ես կորցըրել, չես կարում գըտնել...
 Աղջի, հէյ Անուշ, այ աղջի, Անուշ...»
 Ծընկանը զարկում, հառաչում է «վո՛ւշ»,
 Ու ձորի գըլխին մոլորւած կանգնած:
 Նայում է ներքև սիրտը սևաւնած:
 Ամպերն եկել են սարերը պատել,
 Ձորերը լըցւել, իրար փաթաթւել,
 Հազար չար ու շառ, հազար հարամի,
 Հազար ջահելներ վըխտում են հիմի:

— Թո՛ղ, կանչում են ինձ... մէրըս կիմանայ...»
 — Ձէ, Անուշ, քիչ էլ, մի քիչ էլ մընա...»
 — Ձէ, թող ես գնամ... ախ, ինչ խենթ եմ ես...
 Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պէս,
 Հէնց ես եմ մենակ լալիս ու տանջւում,
 Դու սարի լանջին խաղեր ես կանչում...
 Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
 Ես երբ եմ եկել էստեղ քարացել
 Ու մընում եմ քեզ, մընում, անիրաւ,
 Էնքան մընացի՛ աչքըս ջուր դառաւ
 Ինձ չես լըսում,
 Ձեռն ամպոսում,
 Էլ չես ասում
 Ինչ կըլնեմ ես...
 Ես կը վառւեմ,
 Հուր կը դառնամ,
 Ես կը հալւեմ,
 Ձուր կը դառնամ,
 Ես չը գիտեմ
 Ինչ կը դառնամ,
 Թէ որ մին էլ
 Էսպէս մընամ...

Ասում են՝ ուռին
 Աղջիկ էր ինձ պէս,
 Մընում էր եարին,
 Ու չեկաւ նա տես:
 Խեղճը դողալով
 Անյոյս կըռացաւ,
 Դարդից չորացաւ,
 Ուռենի դարձաւ:
 Զըրերի վըրա
 Գըլուխը կախած
 Դեռ դողում է նա:
 Ու լալիս կամաց,
 Ու ամբողջ տարին
 Մի միտք է անում,
 Թէ եարը եարին
 Ո՞նց է մոռանում...

—Ա՛խ, Անսւշ, Անսւշ, էդ ի՞նչ ես ասում.
 Բա դու չե՞ս լըսում.
 Էն, որ լանջերին խաղեր եմ ասում,
 Ո՞ւմ հետ եմ խօսում...
 Էն, որ գիշերով շըհու եմ փըշում,
 Էն ո՞ւմ եմ կանչում...
 Էն, որ մոլորած նըստած եմ մընում,

Ո՞ւմ հետ եմ լինում...
 Էն, որ հառաչում ու ախ եմ քաշում,
 Էն ո՞ւմ եմ յիշում...
 Ա՛խ, Անսւշ, Անսւշ, անասուած Անուշ...»
 Արբեցած, անսւթ
 Հառաչեց հովիւն ու սըրտին ընկաւ,
 Հալեցաւ, հանգաւ...

IX

—Անսւշ, ա՛յ աղջի, Անսւշ, տո՛ւն արի...»
 Կանչում է մէրը, հառաչում, կանչում:
 —Գալիս եմ, գալիս, գալիս եմ, նանի...»
 Զորից աղջկայ ձէնն է ղողանջում:
 Ու մազերն անկարգ տըւած թիկունքով
 Ու ցըրած շիկնած այտերի վըրան,
 Դուրս եկաւ թեթեւ ամպերի տակից
 Անուշը՝ փախած եղնիկի նըման:
 Նա կուժը դատարկ ետ բերաւ կըրկին,
 Իսկ ուսին տարած ուսաշոր չըկայ,
 Թողել է էն էլ ջըրի եղերքին...
 Ա՛խ, անհոգութիւն ջահել աղջկայ...
 —Նանի, վախեցի, գանգատուում է նա,



Եւ ուզում է լալ, չի կարողանում.
—Նանի, ներքեում ես մարդիկ տեսայ,
Կարծեցի՜ թուրքեր էին լողանում...»
Անիծում է ծեր մէրը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անէծք տալով իջնում է նա ցած՝
Դատարկ ետ բերած հին կուժը ուսին:



Ե Ր Կ Ր Ո Ր Պ Ե Ր Պ

X

(Համբարձման առաւօտը)

Համբարձումն եկաւ, ծաղիլունքը ալւան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով: — հայր
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխոյժ երգերով:

«Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Սե սարեր, եայլա,
Եայլա ջան, եայլա:

Երգ ու բոյր խառնած,
Թե-թեի բըռնած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում,
Ինչպէս թիթեռներ:

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Լաւ օրեր, եայլա,
Եայլա ջան, եայլա:

Եկաւ համբարձում
Ծաղկով զարդարւած,
Մեր բախտին հարցում.

—Ո՞վ է մեզ գըրւած:

—Ա՛յ ջան տղայ, չոբան տղայ, սումն ես դու:

—Աստուած գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:

Դէ հանիւր, անշի,

Վիճակն 'ի բարին,

Երգերով գովենք

էն իգիթ եարին:

Բեղը ծիւ-ծիւ, բոյը թիւ-թիւ էն եարի,

Ի՞նչ դարդ ունեմ քանի նա կայ աշխարհի:

Համբարձում, եայլա,

Եայլա ջան, եայլա,

Հուր սըրտեր, եայլա,

Եայլա ջան, եայլա:

Թընդում են երգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.

Ենում է մէկին իր երազն ու սէր,
Միւսի մուրազը սըրտումն է մընում:

XI

Պըտոյտ է տալիս վիճակը նորից
Քուշուշքը գըլխին ծաղիկ ծաղկամէր,
Թընդում «ջան գիւլում» մատաղ սըրտերից,
Հետը գըլգըլում էն ծաղկոտ սարեր:

«Ա՛յ թուխ մազաւոր աղջիկ,

Ա՛յ սարի սովոր աղջիկ,

Ջիգեարին գիւլա դիպչի

Քեզ սիրի ով որ աղջիկ:

—Ո՛հ, ինչ սև վիճակ քեզ բաժին ընկաւ,

Սևաբախտ քուրիկ, նազելի Անուշ.

Քու ձեռը կոտրի, ով որ հանեցիր...»

Ու ողջ մընացին մոլորւած, ապուշ:

—Սուտ բան է, քուրիկ, դու մի հաւատար,

Լոկ պատահական մի չար խօսք է սա.

Սիւրըդ մի կոտրի սուտ բանի համար,

Քու խաղըդ խաղան, ջան գիւլում ասա:

—Ա՛խ, չէ, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ.

Ես երբեք երբեք, բախտ չեմ ունեցել...
 Ես միշտ էլ էսպէս անբախտ կըլինեմ.
 Մանուկ օրից են դեռ ինձ անիծել...
 Ասում են՝ մի օր, ես օրօրոցում,
 Մի պառաւ դարւիշ մեր դուռն է գալի,
 Իր խաղն ասում է ու բաժին ուզում,
 Իմ նանը նըրան բաժին չի տալի:
 — Կորի, ասում է, կորի մեր դռնից,
 Երեխաս ճաքեց, հեռացիր, զընա...»
 Ու դարւիշն էնտեղ անիծում է ինձ,
 Թէ՛ դըրա օրը լացով անց կենայ...
 Ա՛խ էն դարւիշի անէծքին անգուլթ
 Ու էս վիճակին տեղեակ է Աստուծ.
 Սիրտըս էլ միշտ փակ, սիրտըս էլ միշտ մոլթ,
 Ի՞նչ կայ, չըզիտեմ, իմ առջև պահեմ...
 — Մի տըրտմիր, Անսւշ, մի լինիր յամառ,
 Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
 Մի խելառ դարւիշ, մի անէծք յիմար,
 Ու լալիս ես դու էդպէս սըրտաճաք...
 Հանգիստ կաց, քուրիկ, մի վախիր էդքան,
 Կեանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
 Էդ քո նորահաս մատաղ կուսութեան
 Առաջն դեռ կան երջանիկ օրեր:
 Սուտ բան է, քուրիկ, դու մի հաւատար,

Լոկ պատահական մի չար խօսք է սա.
 Սիրտըդ մի կոտորի սուտ բանի համար,
 Քու խաղըդ խաղա, ջան գիւլում ասա:

(Սումբը երգում է)

Աղջի, բախտաւոր,
 Երնէկ քու սէրին,
 Քու սարի սովոր
 Սև-սև աչքերին:

Հաբարձում, եայլա,
 Եայլա ջան, եայլա,
 Սէր-օրեր, եայլա,
 Եայլա ջան, եայլա:

Մեռնեմ գարունքիդ,
 Ծաղկած գարուն ես,
 Սարի պէս մէջքիդ
 Կանգնած եար ունես:

Համբարձում, եայլա,
 Եայլա ջան, եայլա,
 Սար-եարեր, եայլա
 Եայլա ջան, եայլա:

(Անուշը մենակ)

Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ՝
Ձեմ հասկանում դէպի ուր...
Դողում է պաղ նըրա ձէնից
Իմ սիրտը սև ու տըխուր:

Դուք էլ սարի սիրուն ծաղկունք
Թաքուն մի ցաւ ունիք լուռ,
Աչիկներըդ լիքն է արցունք,
Սիրտներըդ սև ու տըխուր:

Ա՛խ, ծաղիկներն էս աշխարհքում
Տանջում են միշտ էսպէս զուր,
Տըրորւում են ու թառամում
Սիրտները սև ու տըխուր:

(խումբը հեռից)

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Վառ ցաւեր, եայլա,
Եայլա ջան, եայլա:

ԵՐՐՈՐԳ ԵՐԳ

XII

Ձմրան մի գիշեր կար մի հարսանիք,
Հըրճում էր անգուսպ ամբոխը գիւղի.
Գիւղն էին իջել հովիւ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից յետոյ լէն հըրապարակ
Բաց արին մէջ տեղն արձակ գլխատան,
Ձուռնաչին փըչեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան:
Հարա՛յ են տալի — «քաշի՛ հա, քաշի՛...»
Ու դուրս քաշեցին զօռով երկուսին.
Մինը մեր Սարօն, իսկ միւսն Անուշի
Անդրանիկ եղբայր գառնարած Մօսին:
Ողջ գիւղը կանգնեց պարըսպի նման,
Ձուկեց, բաժանեց երկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փահլևան,
Կանգնեց թիկունքին տըղերանց մէկի:
Գոռում են, գոչում երկու բանակից.
— Սրտապինդ կացէք, մի վախէք, տըղերք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջկերք:

Ու տաքանում են տըղերքը սաստիկ,
Փէշերը հաւաք խըրում են գօտին,
Գետին են զարկում ձեռքերը հաստիկ,
Իրար են հասնում թափով մոլեգին...

Ագաթ կայ սակայն էն մութ ձորերում,
Ու միշտ հընազանդ հընոց աղաթին,
Ամբոխի առջև իգիթն իր օրում
Գետին չի զարկի ընկեր իգիթին:
Ու իրար բըռնած Սարօն ու Մօսին
Քաշում են, ընկնում խոզապարկուկի
Ընկնում են գետին, ելնում միասին,
Դժուար է իբրև յաղթել մէկ մէկի:
Իգուր է գոռում ամբոխը հարբած,
Ձուր սըրտատըրոփ նայում աղջիկներ,
Եւ զուր է Անուշն իր շունչը կըտրած,
Սառել ~~ու~~ կանգնել ինչպէս մի պատկեր:
Անուշը կանգնած... Սարօն նըկատեց,
Թունդ առաւ սիրտը ու զարկեց արագ.
Աչքերի առջև մըլալը պատեց,
Մոռացաւ ընկեր, աղաթ ու աշխարհ,
Ու մինչդեռ Մօսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,
Ուժ արաւ Սարօն, ծընկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վըրէն:

Ամբոխը թափեց հարա հըրոցով,
Վեր թըռցրեց ջահել փահլաններին,
Եւ ուրախութեան աղմուկ գոռոցով
Յաղթողին փեսի թախտի մօտ բերին:
Յընծութեան ձայնից, ծափերի զարկից
Շարժում են դողում պատեր ու օճորք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջկերք:

XIII

Վեր կացաւ Մօսին. իրեն կըտրատում,
— Թող գնայ, գոռում է, որ բըռնենք նորից,
Թէ չէ նամարդը, արևս եմ երդւում,
Էլ չի պըրծնելու երբէք իմ ձեռից:
Վէր չի գցել ինձ... ինձ խաբել է նա...
Մէյդան բաց արէք, թող մին էլ մէջ գայ...»
Ու ամեն կողմից ուրախ հըրհըռում:
Թունալի ծաղրով կանչում են, գոռում,

դ- Զէլաւ, էդ չէլաւ,
Վէր չի գցել դեռ,
Մօսին թօլ էլաւ—
Խոզապարկուկ էր...
Հա, հա, հա, տըղերք,

Շատ էլ լաւ կանի.
Մէջքը թափ տըւէք,
Թող մին էլ բըռնի...
Հա՛, հա՛, հա՛, աղղերք,
Մէջքը թափ տըւէք...»

XIV

Եւ աղմըկալի՝ հարսանքի տանից
Դուրս եկաւ Մօսին սաստիկ վիրաւոր.
Արիւն է կաթում սևակնած սըրտից,
Գընում է ըշտապ, քայլերը մոլոր:
— Ամօթ քեզ, Մօսի, թո՛ւք ու նախատինք,
Ամօթ քեզ նըման գոված իգիթին,
Մի անունդ յիշեր, մի բոյիդ մըտիկ.
Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին:
Ի՞նչպէս վէր ընկար դո՛ւ սարի նըման,
Երբոր նայում էր ողջ գիւղը կանգնած...
Դո՛ւ... կուճ գաս տակին Սարօի ծընկան,
Նըրանից յետոյ երևաս կանանց...
Եկած էր էս բանն իսկի քու գըլխին...
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դէ մեռիւր էլի, գետինը մըտիւր,
Տանը վեր ընկիւր՝ իլիկ պըտըտիւր...»

XV

— Վայ, վայ, Մօսի ջան, ինձ մի սպանիր,
Սըրանից յետոյ չեմ սիրիլ նըրան...
Վախենում եմ ես... դամէդ տեղը դիր...
Սիրտըս դողում է տերևի նըման...»
Խընդրում էր լալով եղբօր առաջին
Անգօր ու դալուկ իր քոյրը չոքած,
Մօսին՝ փայլկըտուն խանչալը ձեռին՝
Ուզում էր մորթել նրան աչքը բաց:
— Դէ իմ անունով երգւիր, անըզգած,
Որ էլ Սարօին դու չես սիրելու,
Թէ չէ՝ տեսնում ես խանչալը հանած՝
Մինչև դաստակը սիրտդ եմ խըրելու:
— Քու ոտի հողն եմ, Մօսի ջան, Մօսի,
Դու քու եսիրին երգում ես տալիս...
Ես էլ Սարօին չեմ սիրում՝ ասի,
Տեսնում ես չոքած ի՞նչպէս եմ լալիս...
— Դու խաբում ես ինձ, սուտիկ խաբեբայ.
Ձե՛ս սիրում ասիր. էն ինչ է հապա,
Էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մըտնում՝
Հեկեկում ես դու գիշերւայ մըթնում.
Էն ի՞նչ է հապա, որ դու երազում
«Սարօ ջան, Սարօ, Սարօ» ես ասում...

Մօսի ջան Մօսի, գլխովըդ շուռ գամ.
 Ինձ մի ասպանիր, ինձ թող էս անգամ.
 Էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
 Էլ չեմ կանչիլ ես նրան երազում...
 Ինձ մի ասպանիր, դամեդ տար հեռու...
 Քու քոյրը չեմ ես... իմ Մօսին չես դու...

XVI

Ու էն հարսանքից թըշնամի դարձան
 Ախպեր տըղերքը էս դէպքի համար.
 Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
 Կըրկին հաշտութեան չեղաւ մի հընար:
 Անկտորում Մօսին էլ ուր Մօսին էր,
 Որ՝ աչքը գեռ բաց, էս լուս աշխարքում,
 Իրեն հարազատ քրոջը տեսնէր
 Նամարդ ընկերի—Սարօի գըրկում:
 Գուցէ գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
 Ուզում է ջահել քըրօջն ըսպանի,
 Սարօի անունն ու սէրը թաքուն
 Խանչալի ծէրով սրտիցը հանի:
 Ով գիտի, գուցէ հէնց էս գիշեր էլ
 Իգիթ ոսոխներն, անհաշտ ու յամառ,
 Մէկմէկու հօտից ոչխար են քըշել,

Մէկմէկից վըրէժ առնելու համար:
 Կարող է նոյնպէս պատահել յանկարծ,
 Որ մէկի գէգը, արդիւնքը հընձի,
 Գիշերուայ ժամին հըրով բըռնկած,
 Երկնահաս բոցով աստղերը խանձի:

ՁՈՐՐՈՐԴ ԵՐԿ

XVII

Ամպերը դանդաղ ուղտերի նըման
 Նոր են ջուր խըմած ձորից բարձրանում.
 Քարոտ թիկունքից Չաթինդաղ լերան
 Նոր է արեւ պըռուռը հանում:
 Գիւղում աղմուկով իրար են անցնում,
 Կտեր ծէրերին կանայք հաւաքւած,
 Տըղերքը դէպի քարավան են վազում
 Հըրացանների կիսերից բըռնած:

XVIII

Եկաւ վիթխարի ծերունի մի մարդ,
 Կանգնեց վըրդովւած տըղերանց միջին.
 Մատը դէպի ձոր մեկնելով հանդարտ

Էսպէս նա պատմեց զօռ տալով չիբխին:
 — Էս գիշեր, կէսը կըլինէր գիշերւայ,
 Դեռ չէի կըպցրել աչքըս տեղի մէջ.
 Քունս էլ է կորել, ջանս էլ էն վաղւայ,
 Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...
 Հա, հալալ կէսը կըլնէր գիշերւայ,
 Շունը վերկացաւ էս կըռան վրայ.
 Հէյ հէյ կանչեցի, ձէն տըւող չէլաւ.
 Շունը գազազեց, շունը վեր կալաւ...
 Հէյ գիգի, ասի ինքըս իմ միջում,
 Ինչ է մընացել առաջւան տըղից:
 Քընում էի վաղ մենակ արխաջում,
 Մի ձէն լըսելիս վեր թըռչում տեղից...
 Էն էի ասում, քընել չէի դեռ.
 Կը լինէր դառը գիշերւան կէսը,
 Երկու մարդկային սև կերպարանքներ
 Շան առջև փախած՝ ցած իջան դէսը...
 Էս որ լըսեցին, դէս ու դէն ցըրւած
 Տըղերքը ճեպով ձորը ներս մըտան,
 Ու մըտի տակին, ճամբիցը ծըռւած,
 Երկու մարդու թարմ ոտնատեղ գըտան:

Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
 Սարեր ու ձորեր ոտնատակ տըւեց
 Զորան Սարօին գըտնելու համար,
 Որ սարիցն իջաւ Անուշին փախցրեց:
 Մի ամսից յետոյ տըղերքն եկան տուն,
 Գովելով նըրա արարքը ճարպիկ.
 — Հալալ է տըղին, այ իգիթութիւն,
 Ահա թէ ինչպէս կը փախցնեն աղջիկ:
 Մենակ Անուշի ախպէրը — Մօսին
 Մընաց հանդերում. երդում կերաւ նա,
 Ուր որ էլ լինին՝ նըրանց միասին
 Գըտնի՝ կոտորի, սիրտը հովանայ:
 Մնաց հանդերում. Եւ անա մի օր,
 Քաղւոր կանանց մէջ, մըթան հետ, թաքուն,
 Շորերը պատռած, տխուր, գըլխակոր
 Անուշը ձորից եկաւ հօրանց տուն:

— Աղջիկ, Վառդէշաղ, թէ հօգիդ սիրես,
 Մի գարիդ գըցի՛ր, տես ինչ է ասում.
 Աչքըս խաւարի, տեսիլք դառնամ ես,—
 Տեսիլք եմ տեսիլ գիշերս երազում:

Մի մութ ձորի մէջ, մի նեղ ձորի մէջ
 Անբախտ Սարօի ոչխարը կանգնած,
 Լեզու էր առել ու խաղ էր կանչում,
 Ու խաղ էր կանչում ձէն ձէնի տըւած...
 Մի գարիդ գըցիւր, թէ որդով խընդաս,
 էս երազն իսկի ես լաւ չեմ փորձել.
 Ողորմած Աստուած, Քու զուռը բանաս,
 Քու օտի հողն ենք—Դու ես ըստեղծել...
 Անբան գառները մութ ձորի միջին
 Խաղ էին կանչում ու ձէնով լալիս,
 Սարօի նանն էլ նըրանց առաջին
 Աղլուխ էր առել ու պար էր գալիս...
 —Աղջի, Մանիշակ, վատ բան ես տեսել,
 Գարիս էլ, ահա, էնպէս դուրս եկաւ.
 էս չարն, էս բարին... Սարօն է էս էլ...
 Տես, ահա, Սարօն սև ճամբէն ընկաւ...
 Աստուած խընայի ջահել—ջիւանին,
 Աստուած խընայի իր անբախտ նանին...

XXI

Ու ման է գալի սարերը ընկած
 Սարօն փախցրած եղջերւի նըման,
 Օրհասն առաջին, գընդակն ետևից
 Հանդերը դժօլք, ընկերը դուշման:

Եւ երբ երեկոն հանդարտիկ ու լուռ
 Սարերից իջնում, խաւարն է պատում,
 Նըրա բայաթին ողբում է տըխուր,
 Ընկեր սարերին խօսում, զանգատում:

«Բարձրը սարեր, այ սարեր
 Ձէն եմ տալի «վայ», սարեր,
 Դուք էլ ինձ հետ ձէն տըւէք,
 Իմ դարգերի թայ սարեր:

Որս եմ՝ բութէս ձեզ արած,
 Ձեր ձորերին, ձեզ արած,
 Կուգեմ կորչեմ անդիւման,
 էս աշխարքից բէզարած:

Կորչեմ բէզար դատարկուն,
 Քար-սարէսար դատարկուն,
 Մեռնեմ պըրծնեմ էս օրից,
 Բալքի առնեմ դադար-քուն:

Ա՛խ կը մեռնեմ՝ ամա նա
 Վայ թէ յանկարծ իմանայ,
 Ես ազատեմ էս ցաւից,
 Աչքը լալով նա մընայ:

Լալիս է Անուշն երեսին ընկած,
 Կանգնած են շուրջը կանայք հարևան,
 Ու խօսք չեն գրանում ասեն անարգւած,
 Տարած ետ բերած, անբախտ աղջրկան:
 Աստուած խընայեց՝ կոպիտ ախպէրը
 Հեռու հանդերից դեռ տուն չէր դարձել,
 Իսկ խոթողադէմ ալկոր հէրը
 Մկաւ փըրփըրած թըքել, անիծել:
 — Դուքս գընա, կորի, այ լիբը, անըզգամ,
 Սե ու սուգ լինի թագ ու պսակըդ.
 Կորի, չերևաս աչքիս միւս անգամ,
 Գետինը մըտնի երկար հասակըդ:
 Տեսար, որ նըրան ատում է Մօսին,
 Չեն ուզում, տեսար, նըրան հէրն ու մէրդ,
 Դու քանի գըլուխ ունիս քո ուսին,
 Որ վեր ես կենում փախչում նըրա հետո:
 Խոնրած գիւղացիք կըտուրից իջան
 Մեղմելու կոպիտ բարկութիւնը հօր,
 Յայտնուեց նոյնպէս գիւղի քահանան,
 Մի պատկառելի հըսկայ ալկոր:
 — Դուքս գընացէք, դուքս, գոչեց տէրտէրը,

Անուշը թողէք ուղիղն ինձ ասի,
 Թողէք նա յայտնի իր միտքն ու սէրը,
 Նըրանից յետոյ բանը կը պարզի:
 Մի լար, իմ աղջիկ, ինձ խոստովանիր,
 Սիրում ես նըրան, քու կամքով փախար...
 Եթէ սիրում ես՝ էլ դարդ մի անիր,
 Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...
 — Ի՞նչ են հառաչում... էն ո՞վ էր, մի տես,
 Որ դուրսը յանկարծ աղմըկեց էսպէս...
 Ո՞վ է ըսպանել... Մօսին... ում... ուր...
 — Անուշ, հէյ Անուշ... ջուր հասցրէք, ջուր...»

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ,
 Երկընքի մըթնած ամպերից իջնէր,
 Ինչպէս փոթորիկ սաստիկ սըրնթաց,
 Գիւղից սըլացան մի խումբ կըտրիճներ:
 Յաւից տաքացած էլ բան չեն հարցնում,
 Թըռչում են, ասես անից հալածւած,
 Ու նըրանց առջև անուելի բացւում,
 Թըշշում է ձորը արիւնով լըցւած:
 Թիւղը դատարկւեց մի ակընթարթում,
 Գիւղը դատարկւեց մի ակընթարթում,
 Քարափի գըլխին կանգնած անհամբեր,
 Լոռ, սըրտատըրոփ ականջ են դընում,

Նայում են ներքև... ձէն չի գալիս դեռ.
Դեբեդն է մենակ անդընդում՝ յուզւած՝
Խըլածայն ողբով սողում գէպի ցած:

XXIV

Ու մարդասպանը դուրս եկաւ ձորից,
Դէմքը այլայլւած, քայլածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եւ կերպարանքը փոխւած է բոլոր:
Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խօսելու, սևակնած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տըռաւ սընին
Սև հրացանը, սև օձի նըման:
Պապանձւեց նոյնպէս ամբոխը մեխւած,
Ոչ ոք ծըպըտալ չի համարձակուում,
Մենակ մի հոգի անգուստ կատաղած՝
Հարայ է կանչում, երեսը պոկում:
Մեռած չորանի պառաւ նանն է նա՝
Ցաւից խելագար բառաչում, լալիս.
Տարաբնիտ ծընող, վազում է ահա,
Չորիցն է տըխուր գոռոցը գալիս:

XXV

Սըգաւոր կանայք նըրա ետևից
Հարայ կանչելով ձորը վազեցին,

Իրենց կորցրածն էլ յիշելով նորից՝
Դիակի շուրջը կարգով շարւեցին:
Իգիթին վայել սըրտառուչ ողբով
Հաց ու կոծ արին ձէն ձէնի տըռած:
Տըղերքն էլ մըթին, լուռ ու գըլխակոր,
Մընացին մօտիկ քարերին նըստած:
Ողբացին անշունչ դիակի վըրա
Անտէր մընացած ոչխարի մասին,
Անսիրտ անէծքով յիշեցին նըրա
Անճար մընացած խեղճ եարի մասին:
Եւ նըրա մասին, որ ընկերները
Հանդը գընալիս Սարօ կը կանչեն,
Որ սարից փախած սոված շըները
Կըտերը պիտի ոռնան, կըլանչեն:
Ծանըր չոմբախը, գըլուխը մեխած,
Օճորքում գըրած պիտի մըրրօտի,
Երկար խանչալը, պատիցը կախած,
Պատենում մընայ ու ժանգը պատի...
Որ հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գընալ առանց Սարօի,
Սև շորեր հագած կը նըստի տանը,
Անցած օրերը միտը կը բերի:
Եւ ամեն մի խօսք, մի յիշողութիւն
Կըտրատում էին սիրտը ծեր նանի,

Եւ աղաչում էր նա մեռած որդուն
Մի անգամ խօսի, աչքը բաց անի:
— Ընչի՞ չես խօսում, ընչի՞ չես նայում,
Իմ օր ու արև, կեանք ու ջան՝ որդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,
Թըշնամի որդի, դաւաճան որդի...»
Բայց չէին բացւում աչքերը փակւած,
Շուրթերը սառել, չորացել էին,
Նըրանց արանքից ատաճները բաց
Սիպտակ շարքերով երևում էին:
Ու նա կատաղած՝ յանդուգն անէծքով
Ծառս եղաւ դուշման երկընքի դիմաց,
Եւ հայհոյում էր, և կուրծքը ծեծում,
Եւ լալիս էին ձէն ձէնի տըւած...
«Կարմիր արևից ընկած, Սարօ ջան,
Կանանչ տերևից ընկած, Սարօ ջան...
Արևս հանգաւ, Սարօ ջան,
Գիշերս ընկաւ, Սարօ ջան...»
Գիշերը ընկաւ, Թանձրացաւ մութը
Եւ նըւաղեցին ձէները տըրտում,
Յոգնեցին, հանգան... Ծերուկ Դերեգը
Սըգում էր մենակ խաւար անդընդում:



Սըգւոր գետը
Ծեր Դերեգը,
Սիրտը քըրքրած,
Զուրը փրփրած,
Քարոտ ափին,
Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
Հեծեծում է...

XXVI

Եւ մի քանի ընկեր տըղերք
Զորում, գետի եզերքին,
Փոս փորեցին ու սըրտաբեկ
Հողին տըւին հովւի դին:
Ծառ ու ծաղիկ՝ սըւսըւալով
Բոյր խընկեցին դիւրեկան,
Ծեր Դե-բեդն էլ անեղ ձէնով
Երգից վըսեմ շարական:
Ու տըղերքը տըխուր ու լուռ
Վերադարձան դէպի տուն,
Զորում թողած մի սև բըլուր,
Մի գերեզման անանուն:



Գարունը եկաւ, հաւքերը եկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան.
Մի աղջիկ եկաւ, մի մենակ քաղւոր,
Գետի եզերքին շրջում է մոլոր,
Շրջում է մոլոր, խընդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս:

— Սիրուն աղջիկ, ի՞նչ ես լալիս
էդպէս մենակ ու մոլոր,
Ի՞նչ ես լալիս ու ման գալիս
էս ձորերում ամեն օր:
Թէ լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կը գայ, մի քիչ կաց,
Թէ լալիս ես՝ եարդ ես ուզում,
Ա՛խ նա գընաց, նա գընաց...
Արտասուելով, լալով էդպէս
Ետ չես դարձնի էլ գերիդ,
Ինչո՞ւ իզուր հանգցընում ես
Զահել կըրակն աչքերիդ:
Նըրա անբախտ շիրմի վըրա
Պաղ ջուր ածա աղբիւլի,

Դու էլ գընա նոր սէր արա,
Էսպէս է կարգն աշխարհի:

— Շնորհակալ եմ, անցւոր ախպէր,
Աստուած պահի քու եարին.
Ճամբիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սըրտով դուք ձեր սէրը
Վայելեցէք անթառամ,
Ինձ արցունք է տըւել Տէրը,
Ես պիտի լամ, պիտի լամ...»

Ու ման է գալիս,
Երգում ու լալիս:
Երգերը անկապ, երգերը տըխուր,
Արցունքի նման հոսում են իզուր.
Բայց լալիս է նա ու երգեր ասում,
Ու միշտ էն անմիտ տրտունջն է խօսում,
Թէ ինչպէս յանկարծ աշխարհը փոխեց,
Ինչպէս դատարկեց կեանքում ամեն բան,
Սարերը մնացին որբ ու անչորան,
Թէ ինչպէս յանկարծ նա գընաց հեռու,
Էլ չի դառնալով, էլ չի դառնալով...

«Ետ դան, ետ, իգիթ,
Ետ դան, անիրան,
Կարօտած եարիդ
Աչքը ջուր դառաւ:
Ոչխարդ էն սարով
Շուռ տուր, տուն արի,
Փախիր գիշերով
Ու թաքուն արի...

Ա՛խ, էն կանանչ սարի լանջին
Ով է քընած էն տըղէն,
Վըրէն քաշած սև եափընջին
Կուռը հանած էն տըղէն...
Ջան, իմ եարն է, ջանին մեռնեմ,
Ծաղկի հոտով նա հարբել,
Սարի լանջին, հովի միջին
Մուշ-մուշ, անուշ մըրափել:

Վեր կաց, վեր, իգիթ,
Վեր կաց, անիրան,
Ոչխարդ բեր կիթ,
Օրը ճաշ դառաւ...
Արի, ջան, արի,
Քու գալուն մեռնեմ,

Թուխ չոբան, արի,
Կարօտըս առնեմ...

Տեսէք, տեսէք, դափ ու զուռնով
Խնչ հարանիք է դուրս գալի,
Մարդիկ ուրախ, թօն ու ձիւնով
Ձի են խաղում, չափ տալի...
Աղջի, աղջի, մըտիկ արէք,
էս ի՞նչ տեսիլք ես տեսայ.
Ո՞վ էր տեսել էսպէս հարսնիք—
Ոչ հարս ունեն, ոչ փեսայ...

Բերում են հըրէն
Աման, մեր տան դէմ...
Վէր դըրէք, վըրէն
Հիւսերըս քանդեմ...
Ես էլ եմ գալիս,
Էդ ո՛ւր էք տանում...
Խնձ էլ թաղեցէք
Իր գերեզմանում...

Ա՛խ, չէ, աման, ասում են դա
Մի դիակ է լճու, հոտած,
Արիւնը չոր դէմքի վըրա,
Աչքերն անթարթ, սիպտակած:

Նա սիրուն էր, անողջահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա գալիս էր ցողոտ, շաղոտ,
Հանաքներով ու խաղով...

Արի, ջան իզիթ,
Արի, անիրաւ,
Կարօտած հարիդ
Աչքը ջուր դառաւ:
Էլ մի՛ ուշացնի,
Ես շատ եմ կացել,
Էլ մի՛ լացացնի,
Ես շատ եմ լացել...

Տէս, կը խըռովեմ,
 Լաց կըլեմ ես էլ...
 Ձեմ խօսիլ քեզ հետ...
 Ձեմ սիրիլ քեզ էլ...»

XXVIII

Անլըռեւի վըշվըշում է
Պըղտորը ջուըը Դեբեդի,
Նըբա ափին կանաչում է
Մենակ շիրիմն իգիթի:

Նըրա շուրջը հէգ սիրուհին
Թընդացնում է ողբ ու լաց,
Ձէն է տալիս իր Սարօին
Ու պըտըտուում մոլորած:
Ու հոսում է գիշեր-ցերեկ
Դըցունքն անբախտ աղջըկայ,
Բայց իր սիրած տըղան երբէք
ըկայ, չըկայ, ու չըկայ...
Չվըշում է գետը—վնւշ, վնւշ,
յորձանք է տալիս յորդ,
— կանչում է՝ «Արի, Անսւշ,
Երի, տանեմ եարիդ մօտ...»
Անսւշ, այ աղջի, Անսւշ, տուն արի...»
Գանչում է մէրը վերեկից, կանչում,
Լսու են ձորերը, լսու են անուխ,
Դուշման Դեբեդն է սենակ ժըռընչում:
Վուշ-վնւշ, Անսւշ, վուշ-վնւշ, քուրիկ,
Վնւշ քու սէրին, քու եարին,
Վուշ-վնւշ, Սարօ, վուշ-վնւշ, իգէթ,
Վնւշ քու սիրած սարերին...



Համբարձման գիշեր, էն գիւթիչ գիշեր,
կայ հըրաշալի, երջանիկ վայրկեան.
Բացեւում են ոսկի երկընքի ղըռներ,
Ներքէ պապանձում, լըռում ամեն բան,
Ու Աստուածային անհաս խորհըրդով
Լըցւում բովանդակ Նըրա սուրբ գըթով:

էն վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝
Երկընքի անհոն, հեռու խորքերից
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են գալիս,
Դալին՝ կարօտով մի հեղ համբուրւում
Աշխարհքից հեռու, լազուր կամարում:

